ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

№ ԴԴ-2-Ե-9643

« 13 » նոյեմբերի 2026թ.

«ՉԻՊ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ

ՊԱՐՈՆ ԳՐԻԳՈՐԻ ՅԱՎՐՈՒՄՅԱՆԻՆ

(Հասցե՝ ք. Երևան, Դ. Դեմիրճյան փ. 27/1, բն. 39)

Հարգելի՛ պարոն Յավրումյան,

Սույնով ծանուցում եմ, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/15» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգով Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2026 թվականի հոկտեմբերի 29-ի որոշմամբ, 1-ին, 2-րդ և 6-րդ չափաբաժինների մասով, «ՉԻՊ» ՍՊԸ-ն հայտարարվել է ընթացակարգի ընտրված մասնակից:

Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 6-րդ չափաբաժինների մասով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, սահմանվել է անգործության ժամկետ: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով անգործության ժամկետի ավարտի օր է համարվել 2026 թվականի նոյեմբերի 9-ը ներառյալ: Հիշյալ անգործության ժամկետում պայմանագիր կնքելու մասին որոշումը չի բողոքարկվել:

Տեղեկացնում եմ, որ կնքվելիք պայմանագրի նախագիծը ներկայացվում է eauction.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով և առաջարկում՝ սույն ծանուցումն ու պայմանագրի նախագիծը ստանալու օրվանից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված պայմանագիրը կցել Համակարգ, իսկ որակավորման և պայմանագրի ապահովումների բնօրինակները,

պատվիրատուին ուղղված ուղեկցող գրությամբ, ներկայացնել Դատական դեպարտամենտ (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են Ձեր կողմից միակողմանի հաստատված հայտարարությունների՝ տուժանքների («ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/15» ծածկագրով ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևերին (համապատասխանաբար Հավելված 3.2, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900008000664 և Հավելված 4.1, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900005000758) համապատասխան) կամ կանխիկ փողի ձևով (կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին, իսկ պայմանագրի ապահովումը՝ «900008000664» գանձապետական հաշվին):

Որակավորման ապահովման չափը, 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, հավասար է գնվելիք ապրանքների գնման գների 15 տոկոսին, իսկ 6-րդ չափաբաժնի մասով՝ կնքվելիք պայմանագրի գնի 15 տոկոսին:

Պայմանագրի ապահովման չափը, 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, կազմում է գնվելիք ապրանքների գնման գների 10 տոկոսը, իսկ 6-րդ չափաբաժնի մասով՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը:

Վերոնշյալ ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հարգանքով,

ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/15» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Հովհաննիսյան
Հեռ.՝ (+37410) 511-774, 511-788